ՀՀ, 0001 Երևան, Հյուսիսային 1
+374 12 88 88 88
info@ligainsurance.am
ligainsurance.am

«ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ
Խորհրդի կողմից
(22.05.2023թ. Խորհրդի նիստի թիվ 06
արձանագրություն)

ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Փաստաթղթի կոդ՝ TC750-01-05
Խմբագրություն՝ 02
Գործում է՝ 28.06.2023-ից

ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ավտոմեքենաների կամավոր ապահովագրության սույն պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) մշակվել են համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի և համապատասխանում են ՀՀ ԿԲ կողմից տրված ԱՊՈ թիվ 0009 Լիցենզիայի հետևյալ դասերին.
-Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն (բացառությամբ երկաթուղային)
- Դժբախտ պատահարներից ապահովագրություն:

Պայմանները հանդիսանում են Պայմանների համաձայն կնքված ապահովագրության պայմանագրի անբաժանելի մասը:
Պայմանների համաձայն ապահովագրության պայմանագիր կնքվում է «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ-ի հետ գործող ԱՊՊԱ պայմանագիր ունեցող անձի հետ:
Պայմանների հիման վրա կարող են մշակվել ապահովագրական ծրագրեր/պրոդուկտներ (այսուհետ՝ Ծրագիր):

ԳԼՈՒԽ 1. ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապահովագրող՝ «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ:
Ապահովադիր՝ Ապահովագրողի հետ Ապահովագրության պայմանագիր կնքած գործունակ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, հիմնարկ:
Ապահովագրված անձ՝ ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրական պատահար տեղի ունենալու պահին պայմանագրով ապահովագրված ավտոտրանսպորտային միջոցի վարորդը և/կամ ուղևորը:
Շահառու՝ Ավտոտրանսպորտային միջոցի վարորդի և ուղևորի դժբախտ պատահարներից ապահովագրության դեպքում Ապահովագրված անձը, նրա ժառանգ(ներ)ը, ով ԱՊՊԱ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ անձի առողջությանը պատճառված վնասի գծով ստացել է ապահովագրական հատուցում:
Ավտոտրանսպորտային միջոցի ապահովագրության դեպքում Ապահովադրի կողմից ապահովագրության պայմանագրում նշված անձ, ով ապահովագրության պայմանագրով ապահովագրված ավտոտրանսպորտային միջոցը պահպանելու հետ կապված ունի գույքային շահ՝ համաձայն ՀՀ օրենսդրության կամ այլ պայմանագրի, և ԱՊՊԱ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ ավտոտրանսպորտային միջոցին պատճառված վնասի գծով ստացել է ապահովագրական հատուցում:
Ավտոտրանսպորտային միջոց (այսուհետ՝ Ա/մ)՝ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով ուղևորներ և բեռներ փոխադրելու, ինչպես նաև ոչ տրանսպորտային աշխատանքներ կատարելու համար սարքավորված անիվավոր տրանսպորտային միջոց (այդ թվում՝ թեթև մարդատար ավտոմեքենաներ, միկրոավտոբուսներ, բեռնատար ավտոմեքենաներ, քարշակներ):
Վնաս պատճառած անձ կամ վնաս պատճառող՝ անձ, որի գործողությունների (անգործության) հետևանքով ապահովագրված Ա/մ-ին և/կամ Ապահովագրված անձանց պատճառվել է վնաս, որը հատուցվել է՝ համաձայն ԱՊՊԱ օրենսդրության:
Ճանապարհատրանսպորտային պատահար (այսուհետ՝ ՃՏՊ)՝ Ա/մ-ի՝ ճանապարհով շարժվելու ընթացքում և դրա մասնակցությամբ առաջացած պատահար, որի հետևանքով զոհվել կամ վիրավորվել են մարդիկ, վնասվել են Ա/մ-ներ, կառույցներ, բեռներ կամ պատճառվել է այլ նյութական վնաս:
Պայմանագիր՝ Պայմանների համաձայն Ապահովադրի և Ապահովագրողի միջև կնքված պայմանագիր, որում սահմանված են ցամաքային տրանսպորտի ապահովագրության (բացառությամբ երկաթուղային) և Դժբախտ պատահարներից ապահովագրություն դասերով իրականացվող ապահովագրության պայմանները:
Ապահովագրական գումար՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողի կողմից Շահառուին վճարման ենթակա ապահովագրական հատուցման առավելագույն չափն է:
Ոչ ագրեգատային ապահովագրական գումար՝ գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում յուրաքանչյուր ապահովագրական պատահարի գծով (անկախ դրանց ծավալից և քանակից), որը տեղի է ունեցել Պայմանագրի գործողության ընթացքում:
Ագրեգատային ապահովագրական գումար՝ գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում բոլոր ապահովագրական պատահարների գծով, որոնք տեղի են ունեցել Պայմանագրի գործողության ընթացքում: Ընդ որում՝ ապահովագրական գումարը նվազեցվում է վճարված ապահովագրական հատուցման չափով:
Ապահովագրական սակագին՝ ապահովագրավճարի դրույքաչափն է ապահովագրական գումարի նկատմամբ, որը սահմանվում է Ապահովագրողի կողմից՝ հաշվի առնելով ապահովագրության օբյեկտը և ապահովագրական ռիսկի բնույթը:
Ապահովագրավճար՝ ապահովագրության դիմաց վճար, որն Ապահովադիրը պարտավոր է վճարել Ապահովագրողին՝ համաձայն Պայմանագրում սահմանված կարգի և ժամկետների:
Ապահովագրավճարի հերթական մասի վճարում ապահովագրավճարի տարաժամկետ վճարում նախատեսող Պայմանագրում նշված ապահովագրավճարի մասերը, որոնց չափերը և վճարման ժամկետները սահմանվում են Ապահովագրողի կողմից Պայմանագրում:
Ոչ պայմանական չհատուցվող գումար՝ վնասի չափ, որը ենթակա չէ հատուցման Ապահովագրողի կողմից և յուրաքանչյուր ապահովագրական պատահարի դեպքում նվազեցվում է փոխհատուցվող վնասից:
Ապահովագրական ռիսկ՝ ենթադրվող իրադարձություն, որի տեղի ունենալու համար կնքվում է Պայմանագիրը:
Ապահովագրական պատահար՝ Պայմաններով նախատեսված իրադարձություն կամ դեպք, որի տեղի ունենալու հիմքում ընկած է պատահականության բնույթը և որի արդյունքում Շահառուին պատճառվել է վնաս, ինչն էլ առաջացրել է Ապահովագրողի՝ Շահառուին ապահովագրական հատուցում վճարելու պարտականությունը:
Ապահովագրական հատուցում՝ ապահովագրական պատահարի դեպքում Ապահովագրողի կողմից Պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի սահմաններում Շահառուին կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում այլ անձանց վճարման ենթակա գումար՝ դրամական արտահայտությամբ կամ համարժեք գույքով կամ վնասված գույքի վերանորոգում:

Ա/մ-ի լրիվ կառուցվածքային ոչնչացում՝ Ա/մ-ի կոնստրուկտիվ ոչնչացում, երբ Ա/մ-ի վերանորոգման ծախսերը գերազանցում են մինչև ապահովագրական պատահար տեղի ունենալը Ա/մ-ի իրական (շուկայական) արժեքի 80%-ը (ութսուն) տոկոսը:
ԱՊՊԱ պայմանագիր՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի համաձայն կնքված պայմանագիր:
ԱՊՊԱ օրենսդրություն՝ Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին ՀՀ օրենսդրություն:

ԳԼՈՒԽ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

2.1. Պայմաններով ապահովագրության օբյեկտ են համարվում Ապահովադրի (Ապահովագրված անձի) այն գույքային շահերը, որոնք կապված են Ա/մ-ի տնօրինման, օգտագործման և տիրապետման հետ և որոնք առաջանում են Ա/մ-ի վնասվելու, ոչնչացման (այդ թվում՝ լրիվ կառուցվածքային ոչնչացման) կամ կորուստի հետևանքով և/կամ կապված են Ա/մ-ի օգտագործման ընթացքում առաջացած ապահովագրական պատահարի արդյունքում Ապահովագրված անձի առողջությանը վնաս պատճառելու հետ:
2.2. Պայմանագրով կարող են ապահովագրվել միայն Ա/մ-երը՝ բացառությամբ.
2.2.1. որոշակի վճարի դիմաց ուղևորափոխադրումներ և բեռնափոխադրումներ իրականացնելու նպատակով օգտագործվող ավտոտրանսպորտային միջոցների, վարձակալությամբ տրամադրվող (բացառությամբ լիզինգի) ավտոտրանսպորտային միջոցների,
2.2.2. մինչև 3,000,000 (երեք միլիոն) ՀՀ դրամ շուկայական արժեք ունեցող ավտոտրանսպորտային միջոցների:

ԳԼՈՒԽ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

3.1. Պայմանների համաձայն՝ ապահովագրական պատահար է համարվում Պայմանների հիման վրա կնքված Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ՀՀ կամ ԼՂՀ տարածքում ՃՏՊ-ի արդյունքում մեկից ավելի Ա/մ-ների բախման հետևանքով ապահովագրված Ա/մ-ին պատճառված վնասը, ոչնչացումը կամ կորուստը և/կամ Ապահովագրված անձի առողջությանը պատճառված վնասը, որը հատուցվել է՝ համաձայն ԱՊՊԱ օրենսդրության: Ընդ որում, Ապահովագրված անձի առողջությանը պատճառված վնասի արդյունքում նրա կորցրած աշխատավարձը (եկամուտները), Ապահովագրված անձի մահվան հետևանքով կերակրողին կորցրած անձի կրած վնասները, Ապահովագրված անձի հուղարկավորության հետ կապված ծախսերը ենթակա չեն հատուցման:
3.2. Պայմանների 3.1. կետով սահմանված վնասներից բացառություն են կազմում՝
3.2.1. անհաղթահարելի ուժի (ֆորս մաժոր) հետևանքով առաջացած պատահարի արդյունքում պատճառված վնասները,
3.2.2. ահաբեկչական, ռազմական գործողությունների, դիվերսիայի, խռովությունների կամ զանգվածային անկարգությունների հետևանքով առաջացած պատահարի արդյունքում պատճառված վնասները,
3.2.3. վտանգավոր թափոնների տեղափոխման ժամանակ պատճառված վնասները, եթե դրանք կապված են բացառապես վտանգավոր թափոնների հետ,
3.2.4. Շահառուի դիտավորության հետևանքով պատճառված վնասները,
3.2.5. Պայմանագրով նախատեսված այլ վնասները:

ԳԼՈՒԽ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ: ՈՉ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

4.1. Ապահովագրական գումարը որոշվում է Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ:
4.2. Պայմանագրում սահմանվում է ագրեգատային ապահովագրական գումար:
4.3. Պայմանագրով ապահովագրական գումարը յուրաքանչյուր Շահառուին պատճառված վնասների գծով կազմում է.
4.3.1. ապահովագրված Ա/մ-ին պատճառված վնասի գծով՝ 3,000,000 (երեք միլիոն) ՀՀ դրամ,
4.3.2. Ապահովագրված անձի առողջությանը պատճառված վնասների գծով՝ 6,000,000 (վեց միլիոն) ՀՀ դրամ:
4.4. Պայմանագրով ապահովագրական գումարը բոլոր Ապահովագրված անձանց առողջությանը պատճառված վնասների հանրագումարի գծով սահմանվում է 36,000,000 (երեսունվեց միլիոն) ՀՀ դրամ:
4.5. Պայմանագրով սահմանված ոչ պայմանական չհատուցվող գումարը մեկ ապահովագրական պատահարի հետևանքով յուրաքանչյուր Շահառուին պատճառված վնասների գծով կազմում է.
4.5.1. ապահովագրված Ա/մ-ին պատճառված վնասի գծով ԱՊՊԱ օրենսդրությամբ վճարված հատուցման գումարը, բայց ոչ ավել քան յուրաքանչյուր օբյեկտի գծով ԱՊՊԱ օրենսդրությամբ սահմանված ապահովագրական գումարը,
4.5.2. Ապահովագրված անձի առողջությանը պատճառված վնասների գծով ԱՊՊԱ օրենսդրությամբ վճարված հատուցման գումարը, բայց ոչ ավել քան յուրաքանչյուր ապահովագրված անձի գծով ԱՊՊԱ օրենսդրությամբ սահմանված ապահովագրական գումարը:
4.5.3. Պայմանագրով չհատուցվող գումարը մեկ ապահովագրական պատահարի հետևանքով բոլոր Ապահովագրված անձանց առողջությանը պատճառված վնասների հանրագումարի գծով սահմանվում է ԱՊՊԱ օրենսդրությամբ բոլոր Ապահովագրված անձանց գծով սահմանված ապահովագրական գումարը:

ԳԼՈՒԽ 5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԿԱՏԱՐՈՒՄԸ, ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ, ԴՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանների հիման վրա կնքված Պայմանագրի համաձայն՝ Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրում սահմանված վճարի (ապահովագրավճարի) դիմաց, Պայմանագրում նախատեսված ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Շահառուին վճարել ապահովագրական հատուցում՝ Պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:
5.2. Պայմանագիրը կնքվում է Ապահովագրողի կողմից՝ Ապահովադրի բանավոր կամ գրավոր դիմումի հիման վրա:
5.3. Պայմանագիրը կնքելիս՝ Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին հայտնել ապահովագրական ռիսկի գնահատման համար էական նշանակություն ունեցող իրեն հայտնի բոլոր հանգամանքների մասին:
5.4. Պայմանագիրը կնքելիս՝ Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին ներկայացնել հետևյալ տեղեկությունները և փաստաթղթերի բնօրինակները.
5.4.1.Ապահովադրի կողմից ներկայացվող (հայտարարվող) տեղեկություններն են.
5.4.1.1. Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցե,
5.4.1.2. Ապահովադրի բնակության/հաշվառման հասցե,

5.4.1.3. Ապահովադրի հեռախոսահամար,
5.4.1.4. Ա/մ-ի օգտագործման նպատակ,
5.4.1.5. ապահովագրության ժամկետ,
5.4.1.6. ապահովագրավճարի վճարման նախընտրելի կարգ և ժամկետ:
5.4.2. Ապահովադրի կողմից ներկայացվող փաստաթղթերն են.
5.4.2.1. Ֆիզիկական անձ Ապահովադրի վերաբերյալ.
ա) անձը հաստատող փաստաթուղթ,
բ) ՀՀ քաղաքացիների դեպքում, եթե ներկայացված անձը հաստատող փաստաթուղթը չի պարունակում հանրային ծառայությունների համարանիշ, ապա այդ համարանիշը պարունակող փաստաթուղթ (սոցիալական ապահովության քարտ կամ համապատասխան տեղեկանք) կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք,
5.4.2.2. Իրավաբանական անձ Ապահովադրի վերաբերյալ.
- Հարկ վճարողի հաշվառման համարը պարունակող փաստաթուղթ,
- Պետական գրացման վկայական:
5.4.2.3. Ա/մ-ի (միջոցների) վերաբերյալ.
- Հաշվառման (գրանցման) վկայագիր կամ այլ համարժեք փաստաթուղթ կամ մաքսային հայտարարագիր և Ա/մ տիրապետման, օգտագործման, տնօրինման իրավունքը հաստատող այլ փաստաթղթեր (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական, լիզինգի պայմանագիր և այլն), եթե հաշվառման (գրանցման) վկայագրով կամ այլ համարժեք փաստաթղթով կամ մաքսային հայտարարագրով Պայմանագիր կնքելու իրավասությունը չի հաստատվում: Այլ անձին սեփականության իրավունքի փոխանցման գործընթացում գտնվող Ա/մ-ի գծով Պայմանագրի կնքման համար հաշվառման (գրանցման) վկայագրի փոխարեն ներկայացվում է իրավասու պետական մարմնի կողմից տվյալ Ա/մ-ի վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ,
5.4.2.4. Ներկայացուցչի վերաբերյալ.
ա) Անձը հաստատող փաստաթուղթ,
բ) Ապահովադրի կողմից տրված հասարակ, գրավոր ձևով կազմված լիազորագիր:
5.4.2.5. Ապահովագրողի պահանջով այլ փաստաթղթեր:
5.4.3. Ապահովագրողն իրավունք ունի կրճատել Պայմանագիրը կնքելու համար անհարաժեշտ սույն գլխի 5.4.1 և 5.4.2 կետերով նախատեսված տեղեկությունների և փաստաթղթերի ցանկը:
5.5. Պայմանագիրը կնքելիս Ապահովագրողն Ա/մ-ի զննում կարող է չիրականացնել և Ա/մ-ի շուկայական արժեքը որոշելիս հիմք ընդունել Ապահովադրի կողմից Պայմանագրի կնքման պահին տրամադրվող տեղեկությունը:
5.6. Ապահովադիրը պատասխանատու է Ապահովագրողին տրամադրված տվյալների արժանահավատության համար: Եթե Ապահովադրի կողմից Ապահովագրողին ներկայացված փաստաթղթերում առկա են սուտ, ոչ արժանահավատ կամ ապակողմնորոշող տեղեկություններ, ապա ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցման իրականացումը և պահանջել, որ Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցվի:
5.7. Ապահովագրության ժամկետը սահմանվում է Պայմանագրում՝ կողմերի համաձայնությամբ:
5.8. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պայմանագրի կնքման ամսաթիվ հանդիսացող օրվան հաջորդող օրվա ժամը 00:00-ից, եթե Ապահովագրողը և Ապահովադիրը փոխադարձ համաձայնությամբ չեն սահմանում, որ այն ուժի մեջ է մտնում նշված ժամկետից ավելի ուշ ժամկետում:
5.9. Պայմանագրի գործողությունն ավարտվում է Պայմանագրում որպես ապահովագրության գործողության ավարտի ամսաթիվ նշված օրվա ժամը 23:59-ին, եթե Պայմանագրով կամ այլ հանգամանքներով, որոնց տեղի ունենալու դեպքում նախատեսված է ապահովագրության ժամկետի ավարտի ամսաթվից շուտ Պայմանագրի դադարեցում, այլ բան նախատեսված չէ:
5.10. Պայմանագիրը գործում է ՀՀ և ԼՂՀ տարածքում, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
5.11. Սույն Պայմանների դրույթները կարող են փոփոխվել (բացառվել և/կամ լրացվել) ապահովագրության պայմանագիր կնքելու պահին կամ դրա գործողության ժամկետի ընթացքում, ինչի մասին նշվում է Պայմանագրում: Նման փոփոխությունները չեն կարող հակասել ՀՀ օրենսդրությանը:
5.12. Պայմանագրի գործողությունը դադարում է՝
5.12.1. Պայմանագրի «Ապահովագրության ժամկետը» դաշտում նշված ավարտի ժամկետը լրանալու պահից,
5.12.2. Ապահովագրողի կողմից Պայմանագրով սահմանված պարտականություններն ամբողջ ծավալով կատարելու դեպքում,
5.12.3. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
5.13. Պայմանագիրը վաղաժամկետ դադարում է հետևյալ դեպքերում՝
5.13.1. Պայմանագրում նշված Ա/մ-ն հանվել է պետական հաշվառումից և վերջինիս հաշվառման համարանիշը հանձնվել է ի պահ,
5.13.2. Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո վերացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու հնարավորությունը և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է ապահովագրական պատահարից տարբեր այլ հանգամանքների բերումով,
5.13.3. Ապահովադրի պահանջով՝ ցանկացած ժամանակ, բայց ոչ շուտ, քան Ապահովադրի կողմից համապատասխան մտադրության մասին Ապահովագրողին ծանուցելու օրվանից 15 (տասնհինգ) օր հետո,
5.13.4. Ապահովագրողի նախաձեռնությամբ՝ Ապահովադրի կողմից Պայմանագրի/Վկայագրի էական խախտում կատարելու դեպքում,
5.13.5. Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ և պայմանավորված ժամկետներում,
5.13.6. Ֆիզիկական անձ Ապահովադրի նախաձեռնությամբ՝ առանց որևէ պատճառաբանության, Պայմանագրի կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (այսուհետ՝ մտածելու ժամանակ), ընդ որում, Պայմանագիրը համարվում է լուծված ֆիզիկական անձ Ապահովադրի կողմից Պայմանագիրը լուծելու մասին Ապահովագրողին ծանուցելու օրվան հաջորդող օրվանից:
5.13.7. Մտածելու ժամանակը չի կիրառվում հետևյալ դեպքերում.
5.13.7.1. Պայմանագրի գործողության ժամկետը և/կամ Պայմանագրով նախատեսված ապահովագրության գործողության ժամկետը չի գերազանցում 1 (մեկ) ամիսը,
5.13.7.2. Պայմանագրի կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում ֆիզիկական անձ Ապահովադիրը դիմել է ապահովագրական հատուցում ստանալու պահանջով:
5.13.8. ՀՀ իրավասու պետական մարմնի կողմից Պայմանագրում նշված Ա/մ-ի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցվել է Ապահովադրից տարբեր անձի անունով, բացառությամբ եթե Ապահովադիրը ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով տվյալ Ա/մ-ի վարձակալն է: Եթե Ապահովադիրը ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով տվյալ Ա/մ-ի վարձակալն է, ապա Պայմանագիրը վաղաժամկետ

դադարում է այն դեպքում, եթե դադարել է ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագիրը և տվյալ Ա/մ-ի նկատմամբ սեփականության իրավունքը չի գրանցվել Ապահովադրի անունով կամ գրանցվելուց հետո օտարվել է այլ անձի,

5.13.9. Ապահովագրողի հետ կնքած ԱՊՊԱ պայմանագիրն Ապահովադրի նախաձեռնությամբ դադարեցնելու պահից,

5.13.10. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում և կարգով:

5.14. Պայմանների 5.12.1. և 5.12.2. ենթակետերով նախատեսված դեպքերում Պայմանագիրը վաղաժամկետ դադարում է համապատասխան հիմքն ի հայտ գալու պահին և Ապահովագրողն Ապահովադրին վերադարձնում է Պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարները, ընդ որում՝ Պայմանագրի գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է Ապահովադրի կողմից Ապահովագրողին գրավոր դիմում ներկայացնելու օրվանից սկսած, սակայն համապատասխան հիմքն ի հայտ գալու օրվանից ոչ շուտ:

5.15. Պայմանների 5.12.3., 5.13.4. և 5.13.9. ենթակետերով նախատեսված դեպքերում ապահովագրավճարի վերադարձ չի նախատեսվում:

5.16. Պայմանների 5.13.5. և 5.13.6. ենթակետերով նախատեսված դեպքերում Ապահովագրողի կողմից Ապահովադրին վերադարձվում են Պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարները, իսկ հաշվարկներն իրականացվում են Պայմանագրի վաղաժամկետ դադարման օրվա դրությամբ: Այս դեպքում Ապահովադրին վերադարձման ենթակա ապահովագրավճարից նվազեցվում են ապահովագրված օբյեկտի գծով Ապահովագրողի պարտականությունների կատարման հետ կապված ծախսերը 20 (քսան) տոկոսի չափով և ապահովագրական հատուցումների գումարները՝ համաձայն հետևյալ բանաձևի, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ.

ՎԱ = ԸԱ*ՉԺ/ԳԺ – ԸԱ*0.2

ՎԱ՝ վերադարձման ենթակա ապահովագրավճար,
ԸԱ՝ ընդամենը ապահովագրավճար՝ համաձայն Պայմանագրի,
ՉԺ՝ Պայմանագրի գործողության չլրացած ժամկետ,
ԳԺ՝ Պայմանագրի գործողության ժամկետ:

5.17. Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ կարող են սահմանվել դադարեցման գծով վերադարձվող ապահովագրավճարի հաշվարկի այլ սկզբունքներ:

ԳԼՈՒԽ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆ: ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

6.1. Ապահովագրական սակագնի կոնկրետ չափը սահմանվում է Ապահովագրողի կողմից՝ ելնելով ապահովագրական գումարի, ոչ պայմանական չհատուցվող գումարի մեծություններից, ապահովագրության ժամկետից, ապահովագրավճարի վճարման կարգից և այլ գործոններից, որոնք ազդում են ապահովագրական ռիսկի աստիճանի վրա:

6.2. Ապահովագրավճարը հաշվարկում է Ապահովագրողն ապահովագրության ամբողջ ժամկետի համար՝ ելնելով Պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարից և ապահովագրական սակագնի չափից:

6.3. Ապահովագրավճարը Ապահովադրի (Ապահովադրի լիազորված անձի) կողմից վճարվում է Պայմանագրում նշված չափով, ժամկետներում և ՀՀ դրամով, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

6.4. Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի վճարումը Ապահովադրի կողմից կարող է կատարվել՝

6.4.1. կանխիկ եղանակով՝

6.4.1.1. Պայմանագրի կնքման պահին վճարվող ապահովագրավճարը (դրա առաջին մասը) Ապահովագրողի գրասենյակում համապատասխան աշխատակցին վճարելու կամ Ապահովագրողի գործակալին անմիջապես վճարելու (գումարը նրան հանձնելու) միջոցով:

6.4.1.2. Պայմանագրի կնքումից հետո՝ Պայմանագրով նախատեսված ժամկետներում, վճարվող ապահովագրավճարը (դրա առաջին կամ հերթական մասերը) Պայմանագրում կամ Ապահովագրողի կողմից ներկայացված վճարման հաշվում նշված բանկային հաշվին վճարելու կամ Ապահովագրողի դրամարկղ վճարելու միջոցով:

6.4.2. անկանխիկ եղանակով՝ Պայմանագրի կնքումից հետո Պայմանագրով նախատեսված ժամկետներում, վճարվող ապահովագրավճարը (դրա առաջին կամ հերթական մասերը) Պայմանագրում կամ Ապահովագրողի կողմից ներկայացված վճարման հաշվում նշված բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով:

6.5. Պայմանների 6.4.1.1. ենթակետով նախատեսված դեպքերում Պայմանագրի կնքման և դրանով նախատեսված ապահովագրավճարի (դրա առաջին մասի) վճարման գործընթացները համարվում են մեկ միասնական (անբաժանելի) ամբողջություն՝ արդյունքում ստեղծվող և Ապահովադրին տրվող մեկ միասնական փաստաթղթով՝ կնքված Պայմանագրով: Պայմանների 6.4.1.2. և 6.4.2. ենթակետով նախատեսված դեպքերում Պայմանագրի կնքումը և դրանով նախատեսված ապահովագրավճարի (դրա առաջին կամ հերթական մասերի) վճարումը համարվում են առանձին գործընթացներ՝ յուրաքանչյուր գործընթացի արդյունքում ստեղծվող առանձին փաստաթղթերով՝ համապատասխանաբար Պայմանագրով և վճարման հիմքը հավաստող փաստաթղթով (անդորրագրով):

6.6. Ապահովագրավճարի վճարման եղանակը՝ միանվագ կամ տարաժամկետ (վերջինի դեպքում՝ նաև վճարման նվազագույն պարբերականությունը և չափերը) որոշվում և Պայմանագրում ամրագրվում են Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ: Ընդ որում, ֆիզիկական անձ Ապահովադիրների հետ կնքվող Պայմանագրերով ապահովագրավճարն ամբողջությամբ պետք է փաստացի վճարվի Պայմանագրի կնքման պահին:

6.7. Ապահովադիրն ու Ապահովագրողը ընդունում և համաձայնվում են, որ Պայմանագրով Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցում վճարելիս, Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրական հատուցման գումարից հաշվանցել տվյալ Պայմանագրով նախատեսված և վճարման ենթակա ամբողջ ապահովագրավճարը կամ դրա չվճարված մասն ամբողջությամբ՝ անկախ ապահովագրավճարի հերթական վճարման համար Պայմանագրով սահմանված ժամկետից:

ԳԼՈՒԽ 7. ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1. Ապահովադիրը պարտավոր է Շահառուին (Ապահովագրված անձանց) ծանոթացնել Պայմանների և Պայմանագրի դրույթներին,

7.2. Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալու դեպքում պարտավոր է՝

7.2.1. կատարել «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում վարորդների համար նախատեսված գործողությունները և/կամ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմնի կողմից տրված օրինական ցուցումները:

7.2.2. ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալուց և նրան հայտնի դառնալու պահից հետո անհապաղ, սակայն ոչ ուշ քան 40 (քառասուն) րոպեի ընթացքում, հայտնել Ապահովագրողին՝ զանգահարելով Պայմանագրի վրա նշված հեռախոսահամարով և պատասխանել Ապահովագրողի հեռախոսային հարցադրումներին՝ կատարելով Ապահովագրողի ցուցումները:

7.2.3. ողջամիտ և մատչելի միջոցներ ձեռնարկել պատահարի հետևանքով հնարավոր վնասները նվազեցնելու համար: Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) նման միջոցներ կիրառելիս պետք է հետևի Ապահովագրողի ներկայացուցչի կողմից հեռախոսով Ապահովադրին (Ապահովագրված անձին, Շահառուին) տրված ցուցումներին: Հատուցման ենթակա վնասները նվազեցնելու նպատակով Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) կողմից կատարված ծախսերը, եթե այդպիսիք անհրաժեշտ են եղել կամ կատարվել են Ապահովագրողի ներկայացուցչի ցուցումներին համապատասխան, հատուցվում են Ապահովագրողի կողմից նույնիսկ այն դեպքում, երբ համապատասխան միջոցներն արդյունավետ չեն եղել: Նման ծախսերը հատուցվում են անկախ այն բանից, որ դրանք այլ վնասների հատուցման հետ մեկտեղ կարող են գերազանցել Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը,

7.2.4. չլքել ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության վայրը, սպասել Ապահովագրողի ներկայացուցչին (եթե Ապահովագրողն Ապահովադրին (Ապահովագրված անձին, Շահառուին) տեղեկացրել է, որ իր ներկայացուցիչը ժամանելու է դեպքի վայր) և չտեղաշարժել Պայմանագրում նշված Ա/մ-ն կամ ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության հետ կապ ունեցող առարկաները մինչև Ապահովագրողի ներկայացուցչի, իսկ Ապահովագրողի ներկայացուցչի պահանջով՝ նաև ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմինների աշխատակիցների ժամանումը և ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության փաստով բոլոր անհրաժեշտ տեղեկատվության արձանագրումը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ՝

7.2.4.1. տեղաշարժերը պայմանավորված են եղել մարդկանց անվտանգությունն ապահովելու նկատառումներով,

7.2.4.2. տեղաշարժերը պայմանավորված են եղել ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմինների աշխատակիցների ցուցումներով:

Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) կարող է չսպասել Ապահովագրողի ներկայացուցչի ժամանելուն, եթե վերջինս չի ժամանել պատահարի վայր 7.3.4. ենթակետում նշված ժամկետում կամ հեռախոսով հայտնել է պատահարի վայր իր չժամանելու մասին և համապատասխան հետագա ցուցումներ է տվել Ապահովադրին և Շահառուին (Ապահովագրված անձին),

7.2.5. համապատասխան պահանջի առկայության դեպքում ներկա գտնվել և մասնակցել պատահարի գրանցման և քննության պետական մարմինների և Ապահովագրողի՝ իրեն վերաբերող գործընթացներին,

7.2.6. Ապահովագրողի պահանջով ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունից անմիջապես հետո անցնել ալկոհոլի կամ թմրանյութերի կամ հոգեմետ նյութերի օտագործման փաստի վերաբերյալ քննություն,

7.2.7. ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունից հետո Ապահովագրողի ներկայացուցչին և/կամ փորձագետին տրամադրել Պայմանագրում նշված Ա/մ-ի զննում անցկացնելու հնարավորություն,

7.2.8. մինչև ապահովագրական հատուցման գործընթացի վերջնական կարգավորումը կամ փորձաքննության արդյունքների վերաբերյալ իր և/կամ ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության մյուս մասնակցի (մասնակիցների) համաձայնության ձեռքբերումը առանց Ապահովագրողի համաձայնության չիրականացնել Պայմանագրում նշված և վթարված Ա/մ-ի վերանորոգման աշխատանքներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք պայմանավորված են վարորդի կամ ուղևորի անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ կամ իրավասու պետական մարմինների ցուցումով կամ հրահանգով: Նման դեպքերում Ապահովադիրը և/կամ Շահառուն պարտավոր է վթարված Ա/մ-ի վերանորոգման աշխատանքներն սկսելուց առնվազն 3 (երեք) աշխատանքային օր առաջ գրավոր տեղեկացնել այդ մասին Ապահովագրողին (Ապահովագրողի ներկայացուցչին կամ ապահովագրական գործակալին),

7.2.9. տեղեկանալուց հետո անհապաղ Ապահովագրողին տեղեկացնել իրադարձությունը տեղի ունենալու կամ դրա արդյունքում պատճառված վնասների առթիվ դատական կարգով քաղաքացիական, քրեական կամ վարչական գործ հարուցվելու վերաբերյալ և ներկայացնել նման գործ հարուցված լինելը ապացուցող փաստաթղթեր, իսկ դատական կարգով քաղաքացիական, քրեական կամ վարչական գործ չհարուցվելու դեպքերում՝ նաև իրադարձությունը տեղի ունենալու կամ դրա արդյունքում պատճառված վնասների կապակցությամբ այլ փաստաթղթեր,

7.2.10. Ապահովագրողին տրամադրել ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության վերաբերյալ իրեն հայտնի և իր տրամադրության տակ առկա բոլոր տեղեկությունները և փաստաթղթերը,

7.2.11. հեռախոսավարին հայտնել պատահարում ներգրավված Ա/մ(ներ)-ի հաշվառման համարանիշը (հնարավորության դեպքում),

7.2.12. պատահարի վայրում պարզել պատահարում ներգրավված այլ կողմերի և վկաների անունները, հասցեները և անձը հաստատող փաստաթղթերի համարները (հնարավորության դեպքում),

7.2.13. Ապահովագրված անձին/Ա/մ-ին պատճառված վնասն ամբողջությամբ կամ մասամբ երրորդ անձանց կողմից հատուցվելու դեպքում, այդ մասին անհապաղ հայտնել Ապահովագրողին, իսկ այն ստանալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին Ապահովագրողին հայտնել նաև գրավոր ձևով,

7.2.14. Վերադարձնել Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման ավել վճարված գումարը 10 (տասն) աշխատանքային օրվա ընթացքում:

7.2.15. Ապահովագրված անձին և Շահառուին տեղեկացնել, որ ապահովագրական հատուցում ստանալու համար անհրաժեշտ է պահպանել 7.2. կետի 7.2.1.-7.2.13. ենթակետերով սահմանված պահանջները:

7.3. Ապահովագրողը պարտավոր է՝
7.3.1. Պայմանագիր կնքելիս Ապահովադրին ծանոթացնել Պայմաններին, բացատրել Պայմանագիր կնքելու կարգը, Ապահովադրին տրամադրել Պայմանները, Պայմանագրի, առկայության դեպքում դրան կից հավելվածի (հավելվածների) մեկ օրինակը,
7.3.2. չհրապարակել Ապահովադրի, Ապահովագրված անձի, Շահառուի, նրանց գույքային կարգավիճակի մասին տեղեկություններ՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,
7.3.3. ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության մասին Ապահովադրի և/կամ Շահառուի և/կամ Ապահովագրված անձի կողմից իրեն տեղեկացման դեպքում, անհրաժեշտ հանգամանքները ճշտելուց հետո, Ապահովադրին (Ապահովագրված անձին, Շահառուին) տեղեկացնել պատահարի վայր ժամանելու կամ չժամանելու իր մտադրության մասին,
7.3.4. ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության վայր ժամանելու իր մտադրությունը Ապահովադրին և/կամ Ապահովագրված անձին և/կամ Շահառուին հայտնելու դեպքում ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության վայրում ապահովել իր ներկայացուցչի (ներկայացուցիչների) ժամանումը պատահարի վերաբերյալ ստացված հեռախոսազանգի պահից՝ Երևան քաղաքում և ՀՀ մարզկենտրոններում 35 րոպեի, իսկ դրանցից դուրս՝ 80 րոպեի ընթացքում,
7.3.5. ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության մասին իրեն հայտնի դառնալուց հետո անհրաժեշտության դեպքում իրականացնել պատահարի արդյունքում Պայմանագրում նշված և վնասված Ա/մ-ի զննություն պատճառված վնասի չափը որոշելու նպատակով զննման հնարավորություն ստանալուց հետո առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 8. ՎՆԱՍՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

8.1. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

8.1.1. Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովադիրը (Շահառուն) ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալու և ԱՊՊԱ օրենսդրության համաձայն հատուցում ստանալու օրվանից, իսկ Ապահովագրված անձի առողջությանը պատճառված վնասների գծով ԱՊՊԱ օրենսդրության համաձայն առաջին հատուցումը ստանալու օրվանից սկսած՝ ոչ ուշ, քան 30 (երեսուն) օրվա ընթացքում, սահմանված կարգի գրավոր դիմում ներկայացնելու եղանակով դիմում է Ապահովագրողին: Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) պետք է Ապահովագրողին տրամադրի հնարավորինս ամբողջական տեղեկատվություն, որը հայտնի է իրեն դիմելու պահի դրությամբ (ապահովագրական պատահարի տեղի ունենալու օրը և ժամը, վայրը, պատահարի առաջացման հանգամանքները և այլն):
Սույն կետում նշված պարտավորությունները կրում է նաև Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) իրավահաջորդը, ներկայացուցիչը (լիազորված անձը):
8.1.2. Պայմաններով սահմանված ժամկետի բացթողումը հարգելի է ճանաչվում, եթե ժամկետները բաց թողած անձն ապացուցում է ստորև ներկայացված 8.1.2.1. և 8.1.2.2. ենթակետերում նշված պայմանների միաժամանակյա առկայության փաստը.
8.1.2.1. ժամկետի բացթողնման պատճառ է հանդիսացել տվյալ անձի անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում գտնվելը, որն անհնարին է դարձրել նրա կողմից սահմանված ժամկետում դիմումի, պատասխանի կամ փաստաթղթերի ներկայացումը կամ տեղեկացման պարտավորության կատարումը՝ ներառյալ ներկայացման ենթակա իրավասու պետական մարմնի ակտն ընդունված և/կամ ուժի մեջ մտած չլինելու պատճառով, կամ եթե այդ անձը տեղյակ չի եղել և չէր կարող տեղյակ լինել համապատասխան գործողությունների կատարման հիմքերի մասին (ընդ որում, նման դեպքում, որպես տեղյակ չլինելու հիմնավոր պատճառ Պայմաններով կարող է գնահատվել միայն անձի՝ Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմաններից դուրս գտնվելը),
8.1.2.2. անձը դիմումը կամ պատասխանը ներկայացրել է կամ տեղեկացման պարտավորությունը կատարել է 8.1.2.1. ենթակետով նախատեսված հիմքերը վերանալուց հետո՝ համապատասխան գործողության կատարման համար Պայմաններով սահմանված ժամկետում:
8.1.3. Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) ապահովագրական հատուցում ստանալու համար, դիմումին կից Ապահովագրողին ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.
8.1.3.1. Շահառուի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը (անձի նույնականացման նպատակով),
8.1.3.2. Ա/մ-ին պատճառված վնասի հատուցման գծով՝ դրա նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթի բնօրինակը,
8.1.3.3. Իրավահաջորդությունը հիմնավորող օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի բնօրինակները կամ դրանց՝ նոտարական կարգով հաստատված պատճենները, եթե Ապահովագրողին դիմել է Շահառուի իրավահաջորդը,
8.1.3.4. Ներկայացուցչի միջոցով գրավոր դիմում ներկայացվելու դեպքում՝ ներկայացուցչի լիազորությունը նոտարական կարգով վավերացված (ֆիզիկական անձի դեպքում) կամ իրավաբանական անձի ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված անձի ստորագրությամբ վավերացված (իրավաբանական անձի դեպքում) լիազորագրի բնօրինակը և ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը,
8.1.3.5. Պայմաններով սահմանված ժամկետում դիմելու անհնարինության կամ տեղյակ չլինելու հանգամանքները հիմնավորող փաստաթղթերի կամ այլ ապացույցների բնօրինակները կամ պատճենները,
8.1.3.6. Ապահովագրական պատահարի վայրում իրականացված լուսանկարները և/կամ տեսանյութերը (առկայության դեպքում),
8.1.3.7. Ապահովագրական պատահարի գծով դատական կարգով հարուցված գործով օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտի բնօրինակը կամ պատճենը, իսկ այդպիսի գործ հարուցված չլինելու դեպքում՝ պատահարի գծով կազմված հետևյալ փաստաթղթերից որևէ մեկի և դրա հիմքում ընկած փաստաթղթերի (դեպքի վայրի սխեմա, բացատրություններ, փորձագիտական եզրակացություն) բնօրինակները կամ պատճենները
8.1.3.8. ԱՊՊԱ օրենսդրության համաձայն՝ տվյալ պատահարի առաջացման պատճառների փորձաքննություն իրականացնող փորձագետի եզրակացություն կամ դրան հավասարեցված այլ փաստաթուղթ,
8.1.3.9. Ա/մ-ին պատճառված վնասների հատուցման համար ներկայացվում են նաև.

ա) ԱՊՊԱ օրենսդրության համաձայն՝ տվյալ Ա/մ-ի գծով հատուցման որոշման համար հիմք հանդիսացած՝ վնասների գնահատման փորձաքննություն իրականացնող փորձագետի եզրակացությունը,

բ) Ա/մ-ի վնասման կամ ոչնչացման գծով ԱՊՊԱ օրենսդրության համաձայն Ապահովադրին (Շահառուին) վճարված ապահովագրական հատուցման չափը և ստացման փաստը հաստատող փաստաթղթերի լուսապատճենները:

8.1.3.10. Ապահովագրված անձի առողջությանը պատճառված վնասների հատուցման համար ներկայացվում են նաև՝

ա) Շահառուի կողմից ստացված վնասվածքների վերաբերյալ եզրահանգումը պարունակող դատաբժշկական (բժշկական) փորձաքննության ակտի (եզրակացության) բնօրինակը, բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական հետապնդում իրականացնող մարմնի եզրակացությունը կամ գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտը վկայակոչում է դատաբժշկական փորձաքննության (եզրակացության) արդյունքները,

բ) ամբուլատուր բժշկական օգնության դեպքում՝ ամբուլատոր քարտից քաղվածքի և/կամ բժշկական տեղեկանքի և/կամ կոնսուլտացիոն թերթիկի և/կամ բժշկի եզրակացության բնօրինակը,

գ) ստացիոնար բժշկական օգնության դեպքում՝ ստացիոնար քարտից քաղվածքի (էպիկրիզի) բնօրինակը և հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծավալների հաշվառման ձևի (ձև 0001) բնօրինակները,

դ) միասնական էլեկտրոնային համակարգով պատշաճ կերպով դուրս գրված հաշիվ կամ բուժհաստատության ղեկավարի և գլխավոր հաշվապահի կողմից ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում) թղթային հաշիվ, որոնցում պետք է արտացոլված լինեն նաև բժշկական ծառայություն ստացած անձի անունը, ազգանունը և մատուցված բժշկական ծառայության տեսակը, իսկ առողջությանը պատճառված վնասների գծով Շահառուի կամ երրորդ անձի կողմից արդեն իսկ վճարում կատարված լինելու դեպքերում վճարման հաշվի (հաշիվ-ապրանքագրի) բնօրինակը և հետևյալ փաստաթղթերից որևէ մեկի բնօրինակը՝ դրամարկղային ֆիսկալային կտրոն կամ դրամարկղի մուտքի օրդեր (կանխիկ վճարման դեպքում) կամ բանկային փոխանցման անդորրագիր (անկանխիկ վճարման դեպքում) կամ վճարման փաստը հավաստող այլ փաստաթուղթ՝ ներառյալ ծառայությունը մատուցած կամ ապրանքը վաճառած հաստատության կողմից տրված համապատասխան տեղեկանք, - դրամարկղային ֆիսկալային կտրոն կամ դրամարկղի մուտքի օրդեր (կանխիկ վճարման դեպքում), որոնցում հստակ արտացոլված է մատուցված ծառայությունների կամ ձեռքբերված ապրանքների վերաբերյալ տեղեկատվություն,

ե) Շահառուի կողմից ԱՊՊԱ օրենսդրության համաձայն ստացած ապահովագրական հատուցման չափը և ստացման փաստը հաստատող փաստաթղթերի լուսապատճենները:

8.1.3.11. Ապահովագրողի պահանջով այլ լրացուցիչ փաստաթղթեր:

8.1.3.12. Հատուցում ստանալու գրավոր դիմումը ստորագրվում է երկկողմանի՝ դիմումատուի և դիմումն ընդունողի կողմից, այնուհետև ներկայացված դիմումը դիմումն ընդունած ապահովագրական ընկերության ներկայացուցչի կողմից պատճենահանվում է, և պատճենը տրվում է դիմումատուին:

8.1.3.13. Ապահովագրական հատուցում ստանալու համար սույն գլխով նախատեսված փաստաթղթերը ներկայացվում են պատճենահանված վիճակում՝ բացառությամբ այն փաստաթղթերի, որոնց մասով կատարված է նշում Պայմաններում կամ որոնք Ապահովագրողի պահանջով պետք է ներկայացվեն բնօրինակով:

8.1.3.14. Ապահովագրողն իրավունք ունի կրճատել ապահովագրական հատուցում ստանալու համար սույն գլխով նախատեսված փաստաթղթերի ցանկը, եթե դրանց բացակայությունը չի ազդում Ապահովագրողի հնարավորության վրա՝ սահմանելու պատճառված վնասի առաջացման հանգամանքները և/կամ դրա չափը, կամ պահանջել ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր, եթե հանգամանքների բերումով դրանց բացակայությունն ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստի սահմանումը և/կամ վնասի չափի որոշումը դարձնում է անհնար:

8.1.4. Համաձայն Պայմանների՝ ապահովագրական պատահարի ժամանակ Շահառու չեն համարվում և ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից չեն օգտվում՝

8.1.4.1. այն անձինք, որոնք գտնվել են հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած Ա/մ-ի մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ անձինք տեղյակ չեն եղել, որ Ա/մ-ն հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած է եղել, կամ Ա/մ-ի մեջ գտնվել են իրենց կամքին հակառակ:

8.1.4.2. Ապահովագրական պատահարում մեղավոր ճանաչված Ա/մ-ի սեփականատիրոջ կամ օրինական հիմքով այն տիրապետող այլ անձի ընտանիքի անդամները՝ գույքին պատճառված վնասների մասով: Սույն ենթակետի համաձայն՝ ընտանիքի անդամներ են մեղավոր Ա/մ-ի սեփականատիրոջ կամ օրինական հիմքով այն տիրապետող այլ անձի ծնողները, ամուսինը, երեխաները, քույրը և եղբայրը, վերջիններիս ամուսիններն ու երեխաները,

8.1.4.3. Ապահովագրական պատահարում մեղավոր ճանաչված Ա/մ-ի սեփականատիրոջ կամ օրինական հիմքով այն տիրապետող այլ անձի աշխատակիցները (եթե Ապահովադիրը հանդիսանում է իրավաբանական անձ):

8.2. ՎՆԱՍԻ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

8.2.1. Ապահովադրի (Շահառուի) կողմից տվյալ ՃՏՊ-ի հետևանքով ԱՊՊԱ օրենսդրության համաձայն ապահովագրական հատուցում ստանալու, ինչպես նաև գրավոր դիմումը և սույն գլխով նախատեսված փաստաթղթերը Պայմաններով սահմանված ժամկետում ներկայայացնելու օրվանից հետո՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, Ապահովագրողն ընդունում է որոշում՝ ապահովագրական պատահարի վերաբերյալ ապահովագրական հատուցում իրականացնելու, հատուցումը նվազեցնելու կամ ապահովագրական հատուցումը մերժելու մասին: Ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունն ապահովագրական պատահար ճանաչելու և հատուցման որոշում ընդունելու դեպքում Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցում համապատասխան որոշումն ընդունելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հատուցումը մերժելու կամ հատուցման չափը նվազեցնելու դեպքում՝ կայացված պատճառաբանված որոշումը Պայմանագրում նշված մշտական բնակության վայրի հասցեով՝ պատվիրված նամակով, կամ առձեռն՝ որոշումը կայացնելու օրվանից 5 (հինգ) օրացուցային օրվա ընթացքում առաքում է Ապահովադրին(Ապահովագրված անձին, Շահառուին):

8.2.2. Ապահովագրողն իրավունք ունի հետաձգել ապահովագրական պատահարի վերաբերյալ ապահովագրական հատուցում իրականացնելու, հատուցումը նվազեցնելու կամ ապահովագրական հատուցումը մերժելու մասին որոշման կայացումը, եթե առաջացել է ներկայացված փաստաթղթերը ստուգելու, իրավասու մարմիններին լրացուցիչ հարցումներ ուղարկելու, լրացուցիչ փորձաքննություն իրականացնելու անհրաժեշտություն,

8.2.3. Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցման վճարումը հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում.

8.2.3.1.Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալուց հետո սահմանված ժամկետում և կարգով Ապահովագրողին չի տեղեկացրել ապահովագրական պատահարի մասին,

8.2.3.2.Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) Պայմաններով սահմանված ժամկետում չի ներկայացրել Ապահովագրողին անհրաժեշտ փաստաթղթերը՝ ապահովագրական հատուցում վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը նվազեցնելու/մերժելու մասին որոշում կայացնելու համար կամ ներկայացրել է թերի և/կամ ոչ արժանահավատ տեղեկություններ և/կամ կեղծ փաստաթղթեր կամ ներկայացված տեղեկությունները/փաստաթղթերը հակասում են իր կողմից Ապահովագրողին ԱՊՊԱ օրենսդրության հիման վրա ներկայացրած ապահովագրական հատուցում ստանալու հայտային գրավոր դիմումին կից ներկայացրած տեղեկություններին/փաստաթղթերին,

8.2.3.3. Ապահովադիրը (Շահառուն) արդեն իսկ հատուցում է ստացել վնասը պատճառած անձից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Վնաս պատճառած անձի կողմից հատուցումը ստացվել է չհատուցվող գումարի և/կամ Պայմանագրում նշված ապահովագրական գումարը գերազանցող գումարի գծով,

8.2.3.4. Ապահովադրի (Շահառուի) կողմից խախտվել են Ապահովադրի(Շահառուի) կողմից Պայմաններով սահմանված ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին դիմելու և սույն գլխով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու ժամկետները և չի հիմնավորվել Պայմանների 8.1.2. ենթակետում նշված հանգամանքների առկայությունը,

8.2.3.5. ապահովագրական պատահարի պահին Պայմանագրում նշված Ա/մ-ի վարորդը գտնվել է ալկոհոլի, թմրանյութերի կամ հոգեմետ նյութերի ազդեցության ներքո,

8.2.3.6. Շահառուին վնաս է պատճառվել Պայմանագրում նշված Ա/մ-ն մրցույթներում, փորձարկումներում, ուսումնական նպատակներով օգտագործելու արդյունքում,

8.2.3.7. պատահարն առաջացել է Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) դիտավորյալ գործողությունների արդյունքում,

8.2.3.8. պատահարը տեղի է ունեցել այն գոտիներում, որտեղ պաշտոնապես հայտարարված է արտակարգ իրավիճակ,

8.2.3.9. Պայմանագրով ապահովագրվել է 2.2 կետում նշված կատեգորիաներից ցանկացածին պատկանող տրանսպորտային միջոց կամ Պայմանագրի գործողության ընթացքում Ա/մ-ն շահագործվել է 2.2.1 կետում նշված նպատակներով,

8.2.3.10. Պայմանագիրը կնքելիս Ապահովադիրն ակնհայտ սուտ տեղեկություններ է հայտնել Ապահովագրողին՝ ապահովագրության ռիսկայնության աստիճանը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ, եթե այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել Ապահովագրողին մինչև ապահովագրական պատահարի տեղի ունենալը:

8.2.3.11. Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) չի կատարել Պայմաններով և/կամ Պայմանագրով նախատեսված իր պարտականությունները,

8.2.3.12. պատահարի առաջացման մեջ առկա է Շահառուի կամ Շահառուի Ա/մ-ն տիրապետող անձի ոչ դիտավորյալ մեղքը, որի դեպքում ԱՊՊԱ օրենսդրությամբ հատուցումը նվազեցվել է տվյալ Շահառուի գույքին պատճառված վնասների՝

ա) 100%-ի չափով, եթե վերջինս տվյալ պատահարում միակ մեղավորն է,

բ) 50%-ի չափով, եթե պատահարում առկա է նաև այլ անձանց մեղքը,

8.2.3.13. Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) խոչընդոտել է պատահարի պատճառների բացահայտմանը և վնասի չափի որոշմանը,

8.2.3.14. Համաձայն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կամ իրականացված փորձաքննության արդյունքների՝ բացակայում է տվյալ պատահարում Շահառուին վնաս պատճառած Ա/մ (ներ)-ի տիրապետողի (տիրապետողների) մեղավորությունը: Սույն ենթակետը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ վնաս պատճառած Ա/մ(ներ)-ի տիրապետողի (տիրապետողների) անմեղությունը պայմանավորված է վերջինի մահով կամ առողջական վիճակով կամ պատահարի առաջացման պատճառ (կամ պատճառներից մեկը) հանդիսացող այնպիսի գործոններով, որոնք, Պայմանների համաձայն, հաշվի չեն առնվում պատճառների փորձագետի կողմից վարորդի մեղավորության որոշման համար: Նշված դեպքերում համապատասխան հիմքով անմեղ ճանաչված Ա/մ-ի տիրապետողի կողմից բոլոր այլ անձանց պատճառված վնասի հատուցման պարտավորությունն առաջանում է առանց նրա մեղքի՝ որպես առավել վտանգի աղբյուրով տվյալ պայմաններում իրենցից այդպիսի վտանգ ներկայացնող օբյեկտներին և անձանց պատճառված վնասի համար պատասխանատվության արդյունք:

8.2.3.15. Պայմաններով և/կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

8.2.4. Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրական պատահարի վերաբերյալ ապահովագրական հատուցում իրականացնելու, հատուցումը նվազեցնելու կամ ապահովագրական հատուցումը մերժելու մասին որոշում կայացնելիս և ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած վնասների չափը որոշելիս իրականացնել լրացուցիչ փորձաքննություն:

8.2.5. Ապահովագրական հատուցման չափը որոշելիս Ապահովագրողն իրավունք ունի հիմք ընդունել 8.2.4. ենթակետի համաձայն իրականացված լրացուցիչ փորձաքննության արդյունքները:

8.2.6. Եթե ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության գծով ապահովագրական հատուցման վճարումն ԱՊՊԱ օրենսդրության համաձայն Ապահովագրողի կողմից ենթակա է մերժման, ապա տվյալ իրադարձության հետևանքով առաջացած վնասը Պայմանագրով հատուցման ենթակա չէ:

8.2.7. Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա չեն բարոյական վնասը, բաց թողնված օգուտը, պարապուրդը, կորցրած աշխատավարձը (եկամուտը), այլ անուղղակի և առևտրային կորուստները, վնասները և ծախսերը, օրինակ՝ տուգանքներ, ապահովագրական պատահարի կարգավորման ընթացքում հյուրանոցում բնակվելը, գործուղման ծախսերը, հեռախոսային խոսակցությունները, ապրանքների մատակարարման և ծառայությունների

մատուցման ժամկետների խախտման հետ կապված կորուստները, այլ անձանց պատճառված վնասները, տուգանքները, տույժերը և այլն:
8.2.8. Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա չեն ապահովագրական պատահարի ժամանակ Ա/մ-ում գտնվող իրերին և/կամ սարքավորումներին պատճառված վնասը:
8.2.9. Ֆիզիկական անձ Ապահովադիրն իրավունք չունի պահանջել ապահովագրական հատուցում մտածելու ժամանակի ընթացքում տեղի ունեցած ապահովագրական պատահարի համար, եթե այդ մասին նա չի ծանուցել Ապահովագրողին և եթե այդ պատահարը տեղի ունենալուց հետո ֆիզիկական անձ Ապահովադիրը, մինչև մտածելու ժամանակի ավարտը, ծանուցել է Ապահովագրողին Պայմանագիրը լուծելու մասին:

8.3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

8.3.1. Շահառուի գույքին պատճառված վնասները հատուցվում են ՀՀ դրամով համապատասխան գումար վճարելու ձևով, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ կամ պատճառված վնասի վերականգնման (վերանորոգման) միջոցով՝ գույքին պատճառված վնասների հատուցման գծով ԱՊՊԱ օրենսդրությամբ սահմանված տրամաբանությամբ:
8.3.2. Ա/մ-ի գծով կատարված վերանորոգման աշխատանքների որակի համար Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում:
8.3.3. Ապահովագրված անձի առողջությանը պատճառված վնասների գծով Ապահովագրողի կողմից հատուցվում են Ապահովագրված անձի առողջությունը վերականգնելու նպատակով կատարվող բժշկական ծախսերը: Ընդ որում, Ապահովագրողի ապահովագրական հատուցում իրականացնելու պարտավորությունն առաջանում է, երբ Ապահովագրված անձը ներկայացնում է առողջությանը պատճառված վնասների գծով ԱՊՊԱ օրենսդրությամբ սահմանված ապահովագրական գումարի սպառված լինելը հավաստող փաստաթղթեր:
8.3.4. Ապահովագրված անձի առողջությանը պատճառված վնասի համար ապահովագրական հատուցումը վճարվում է անմիջապես բժշկական հաստատությանը՝ բացառությամբ հետևյալ ծախսերի գծով հատուցումների դեպքերի.
8.3.4.1. բժշկի ցուցումով բուժման շարունակականության ապահովմանն ուղղված միջոցառումների, դեղեր ձեռք բերելու, պրոթեզավորման, անվասայլակի, տեխնիկական այլ միջոցների ձեռքբերման հետ կապված ծախսերը,
8.3.4.2. Ապահովագրված անձի առողջության վերականգնման համար Ապահովագրված անձի կամ այլ անձի կողմից արդեն իսկ կատարված ծախսերը, եթե Ապահովագրված անձը կամ վճարումն իրականացնող անձը հիմնավորում են իրենց կողմից վճարման իրականացման անհրաժեշտությունը:
8.3.5. Եթե Պայմանագրով նախատեսված պատահարի հետևանքով Շահառուների առողջությանը պատճառված վնասները գերազանցում են բոլոր Ապահովագրված անձանց առողջությանը պատճառված վնասների գծով սահմանված ապահովագրական գումարը, ապա Ապահովագված անձանցից յուրաքանչյուրին ապահովագրական հատուցում վճարվում է վնասների ընդհանուր գումարում նրանց առողջությանը պատճառված վնասների չափերին համամասնորեն՝ բոլոր Ապահովագրված անձանց առողջությանը պատճառված վնասների գծով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում: Սույն կետի համաձայն հաշվարկված՝ յուրաքանչյուր Ապահովագրված անձին վճարման ենթակա գումարը չի կարող գերազանցել յուրաքանչյուր Ապահովագրված անձի առողջությանը պատճառված վնասների գծով Պայմաններով սահմանված ապահովագրական գումարը: Այն դեպքում, երբ Ապահովագրված անձանցից մեկի (մի քանիսի) համար, սույն կետի համաձայն, համամասնորեն հաշվարկված գումարը (գումարներից յուրաքանչյուրը) գերազանցում է յուրաքանչյուր Ապահովագրված անձի առողջությանը պատճառված վնասների գծով սահմանված ապահովագրական գումարը, ապա գերազանցող մասով (մասերով) հատուցվում են մյուս Ապահովագրված անձանց պատճառված վնասները՝ այդ վնասներին համամասնորեն՝ յուրաքանչյուր Ապահովագրված անձի առողջությանը պատճառված վնասների գծով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:
8.3.6. Եթե Ապահովադիրն Ապահովագրողի հետ կնքել է միևնույն ապահովագրական ռիսկը ծածկող մեկից ավելի պայմանագրեր, որոնց ժամկետներն ամբողջությամբ կամ մասամբ համընկնում են, ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում ապահովագրական հատուցումն իրականացվում է ամենամեծ ապահովագրական գումար նախատեսող Պայմանագրով, իսկ մյուս Պայմանագրերը համարվում են ուժի մեջ չմտած և դրանցով ապահովագրական հատուցում չի իրականացվում:
8.3.7. Եթե ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալու պահի դրությամբ Պայմանագրից բացի առկա է այլ գործող ապահովագրության պայմանագիր, որի կողմ է հանդիսանում Ապահովագրողից տարբեր ապահովագրական ընկերություն և դրանով ևս հատուցման ենթակա են սույն Պայմաններով նախատեսված ռիսկերը, ապահովագրական հատուցում իրականացնելու վերաբերյալ որոշում կայացնելիս Ապահովագրողը հատուցումն իրականացնում է Պայմանագրի գծով ապահովագրական գումարի և նշված բոլոր պայմանագրերի գծով ընդհանուր ապահովագրական գումարի հարաբերությանը համամասնորեն:

ԳԼՈՒԽ 9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

9.1. Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում Ապահովադիրը պարտավոր է ոչ ուշ, քան իրեն այդ մասին հայտնի դառնալու պահից 10 (տասն) աշխատանքային օրվա ընթացքում, իսկ Ա/մ-ի օգտագործման նպատակի փոփոխման վերաբերյալ՝ նախապես, Ապահովագրողին գրավոր տեղեկացնել Պայմանագիրը կնքելիս Ապահովագրողին ներկայացված փաստաթղթերում ներառված և/կամ Ապահովադրի կողմից ներկայացված (հայտարարված) այն տեղեկություններում կատարված փոփոխությունների մասին, որոնք հիմք են հանդիսացել Պայմանագրի կնքման համար (այդ թվում՝ Ա/մ-ի օգտագործման նպատակի, Ա/մ սեփականատիրոջ փոփոխման), եթե այդ փոփոխությունները կարող են որակապես ազդել ապահովագրական ռիսկի մեծացման վրա: Ընդ որում, սույն կետի իմաստով՝ ապահովագրական ռիսկի մեծանալու վրա որակապես ազդող փոփոխություններ են համարվում այն փոփոխությունները, որոնց պայմաններում Պայմանագրի կնքման դեպքում վճարման ենթակա կլիներ ավելի բարձր ապահովագրավճար: Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին սույն կետում նախատեսված ժամկետում հայտնել նաև Ա/մ-ի հաշվառման համարանիշի փոփոխության մասին և Ապահովագրողի հետ կնքել Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիր:

9.2. Ապահովագրական ռիսկի մեծացումն առաջացնող հանգամանքների մասին տեղեկացված Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու փոփոխել Պայմանագրի պայմանները կամ վճարել ռիսկի մեծանալուն համաչափ լրացուցիչ ապահովագրավճար:
9.3. Եթե Ապահովադիրն առարկում է Պայմանագրի պայմանների փոփոխությունը և/կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարումը, Ապահովագրողն իրավունք ունի պահանջել լուծել Պայմանագիրը:

ԳԼՈՒԽ 10. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ԱՆՑՆԵԼԸ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)

10.1. Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) պահանջի իրավունքը, որը նա ունի Վնաս պատճառած անձի նկատմամբ, անցնում է ապահովագրական հատուցումն իրականացրած Ապահովագրողին՝ վերջինիս կողմից հատուցված գումարի սահմաններում:
10.2. Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) պարտավոր է հնարավորության դեպքում Վնաս պատճառած անձին ներկայացնել պատշաճ կերպով ձևակերպված պահանջ և Ապահովագրողին փոխանցել Վնաս պատճառած անձի նկատմամբ պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:
10.3. Եթե Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) հրաժարվել է Վնաս պատճառած անձի նկատմամբ իր պահանջի իրավունքից կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) մեղքով, Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու ապահովագրական հատուցման ավել վճարված գումարի վերադարձ:

ԳԼՈՒԽ 11. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1. Պայմանների համաձայն կնքված Պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են բանակցությունների միջոցով:
11.2. Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն:
11.3. Վիճելի հարցեր լուծելու դեպքում Պայմանագրի դրույթները գերակայող ուժ ունեն Պայմանների նկատմամբ:
11.4.. Վիճելի հարցեր լուծելու դեպքում Ծրագրի դրույթները գերակայող ուժ ունեն Պայմանների նկատմամբ:
11.5. Վիճելի հարցեր լուծելու դեպքում, եթե Պայմաններով Ծրագրի դրույթների վերաբերյալ նախատեսված է առավել մանրամասն նկարագրություն, ապա կիրառվում են Պայմանների և Ծրագրի դրույթները միաժամանակ: